Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1063-28.04.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը (կցվում է):

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2024 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված):

3. Հաշվետու ժամանակահատվածում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից»:

4. Հաշվետու ժամանակահատվածում Կառավարության իրականացրած միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

5. Հաշվետու ժամանակահատվածում 2 ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր մասնավորեցնելու մասին ընդունվել են Կառավարության որոշումներ, որոնցից ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է 1 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը:

6. Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի մարտի 3-ի ՀՕ-135-Ն օրենքով Ծրագրի 1-ին հավելվածից հանվել է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն» բաժնից՝ «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90119):

7. Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 321,688.82 հազար հայկական դրամ, որից՝ ընկերությունների մասնավորեցումից ստացված միջոցները՝ 315,725.51 հազար հայկական դրամ (այդ թվում՝ նախորդ տարիներին մասնավորեցված ընկերություններից տարաժամկետ վճարումներից ստացված միջոցները՝

15,147.5 հազար հայկական դրամ), նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված միջոցները՝ 5,963.31 հազար հայկական դրամ:

8. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 226,971.16 հազար հայկական դրամ:

9. Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-127-Ն և ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-126-Ն օրենքների՝ 2024 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ փոխանցվել է 94,717.65 հազար հայկական դրամ:

10. Կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ, ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

11. Հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 1 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, որի մասին տեղեկությունը ներկայացված է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի 1-ին հավելվածում:

12. Մասնավորեցման գործարքների արդյունքում պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարողականը հետևյալն է.

1) պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով 2024 թվականի ընթացքում 4 գնորդի կողմից ստանձնած՝ պրոֆիլի պահպանման պարտավորությունները կատարվել են, 1 գնորդի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով գործը գտնվում է դատական գործընթացում և 1 գնորդի կողմից պայմանագրով ստանձնած պրոֆիլի պահպանման պարտավորությունը կատարվել է, իսկ ներդրումային պարտավորությունը չկատարելու հետևանքով հաշվարկվել է տուգանք 30 000 000 հայկական դրամի չափով:

2) մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա՝ պրոֆիլի պահպանման պարտավորությունների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին օբյեկտների, ներկայացված են «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի 2-րդ հավելվածում:

13. Հաշվետու ժամանակահատվածում ընկերությունների լուծարման գործընթաց չի իրականացվել:

3. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

14. Հաշվետու ժամանակահատվածում «փոքր» օբյեկտ չի մասնավորեցվել:

Հավելված 1
«Պետական գույքի մասնավորեցման
2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2024 թվականի տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին»
օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ընկերության (պետական գույքի) անվանումը (ծածկագիրը՝ ըստ Ծրագրի)	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմինը	Կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատված արժեքը (հազար հայկական դրամ)	Վաճառքի գինը (հազար հայկական դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտավորությունները (հազար հայկական դրամ)	Ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների մասին՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	«Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ի 100% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (ծածկագիր՝ 90051)	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 2/3	Պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1388-Ա որոշում	3,228,782.7 (այդ թվում 0.102737 հա հողատարածքի՝ 191,850.0 հազար հայկական դրամ շուկայական արժեքը)	3,036,932.7 (առանց 0.102737 հա հողատարածքի՝ 191,850.0 հազար հայկական դրամ շուկայական արժեքի)	18,692.8	ընկերությունը պարտավոր է 5 տարվա ընթացքում կատարել 1,200,000.00 հազար հայկական դրամի ներդրումներ՝ 1-ին տարի 10,000.0 հազար հայկական դրամ 2-րդ տարի 180,000.0	«ՆԵՔՍՏ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» ՍՊԸ

						գումարը վճարել 10 տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարի 303,693.27 հազար հայկական դրամ		հազար հայկական դրամ 3-րդ տարի 300,000.0 հազար հայկական դրամ 4-րդ տարի 350,000.0 հազար հայկական դրամ 5-րդ տարի 360,000.0 հազար հայկական դրամ և 25 տարվա ընթացքում պրոֆիլի պահպանման պարտավորություն	

Հավելված 2
«Պետական գույքի մասնավորեցման
2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2024 թվականի տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊՐՈՖԻԼԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

h/h	Մասնավորեցված գույքի և գնորդի անվանումը	Նախատեսված պայմանագրային պարտավորությունները	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1.	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Սպանդարյան Գնորդ՝ Բագրատ Առաքելյան Պայմանագիր՝ 225-Մ 20.01.2005 թ	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	20.01.2024թ.	Պահպանվել է:
2.	Հրազդանի կինոցանցի գույքի կազմից առանձնացված «Բարեկամություն» կինոթատրոնի գույք Գնորդ՝ Արտավազդ Ղազարյան Պայմանագիր՝ 226-Մ 24.01.2005 թ.	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	24.02.2024թ.	Պահպանվել է:
3.	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի բաժնետոմսեր ք.Երևան, Խանջյան 19, Գնորդ՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի աշխատավորական կոլեկտիվին՝ 40%,	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	22.10.2024թ.	Պահպանվել է:

	«Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 30%, «Մաքուր երկաթի գործարան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 30% : Պայմանագիր՝ 435-ՈՒ 22.10.2002թ.:			
4.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի 90% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցում Գնորդ՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ Պայմանագիր՝ 880-Ու 10.08.2020թ.	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	10.08.2024թ.	Պահպանվել է:
5.	«Նեյտրոն ԳԱՄ» ՓԲԸ Ք.Երևան, Բագրատունյաց 73 և «Բագավան» ՓԲԸ 100% բաժնետոմսեր: Գնորդ՝ ք.Աշտարակ, Բագավան 2: «Մոսթոն Էնջինիրինգ ԼՏԴ» ընկերություն: Օլիաջի առևտրի կենտրոն, Ֆրենսիս Ռեյչլ փողոց 1312 Վիկտորիա, Մահե, Սեյշելյան կղզիներ Տնօրեն Դավիթ Գալստյան Պայմանագիր՝ 865-Ու 12.04.2011թ. Կառավարության 21.06.2007 թվականի թիվ 714-Ն որոշում:	Կատարել 3,4 մլդ հայկական դրամի չափով ներդրում : Ապահովել 180 նոր աշխատատեղ՝ ամսական միջին աշխատավարձը դարձնելով 80 000 հայկական դրամ: Պահպանել Ընկերության գործունեության պրոֆիլը:	14.10.2024թ.	Դատական գործընթացում է:
6.	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Կատարել 150 000 000 հայկական դրամի	30.12.2024թ.	Հաշվարկվել է տուգանք 30 000 000 հայկական դրամ, պահպանվել է

	Գնորդներ՝ Վիոլետա Սարգսյան, Աննա Գյոզալյան Պայմանագիր՝ 11.04.2023թ. 01-Մ	ներդրում, պրոֆիլի պահպանում		ընկերության գործունեության պրոֆիլը

ՏԵՂԵԿԱՆՔ

Լրամշակված ՆԱԽԱԳԻԾ

Կ-1063-28.04.2025-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը (կցվում է):

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի մասնավորեցման ծրագրի կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2024 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված):

3. Հաշվետու ժամանակահատվածում գործողության մեջ է եղել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքը (այսուհետ՝ Ծրագիր): «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «նախորդ ծրագրերի ցանկերում ընդգրկված, սակայն չմասնավորեցված ընկերությունները (ձեռնարկությունները) և «փոքր» օբյեկտները նոր ծրագրի մասն են վերջինիս ուժի մեջ մտնելու պահից»:

4. Հաշվետու ժամանակահատվածում Կառավարության իրականացրած միջոցառումներն ուղղված են եղել Ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

5. Հաշվետու ժամանակահատվածում 2 ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր մասնավորեցնելու մասին ընդունվել են Կառավարության որոշումներ, որոնցից ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է 1 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը:

6. Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրում կատարվել է հետևյալ փոփոխությունը.

««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի մարտի 3-ի ՀՕ-135-Ն օրենքով Ծրագրի 1-ին հավելվածից հանվել է «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն» բաժնից՝ «Արտակարգ իրավիճակների օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90119):

7. Հաշվետու ժամանակահատվածում մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 321,688.82 հազար հայկական դրամ, որից՝ ընկերությունների մասնավորեցումից ստացված միջոցները՝ 315,725.51 հազար հայկական դրամ (այդ թվում՝ նախորդ տարիներին մասնավորեցված ընկերություններից տարաժամկետ վճարումներից ստացված միջոցները՝ 15,147.5 հազար հայկական դրամ), նախորդ տարիներին մասնավորեցված «փոքր» օբյեկտներից հաշվետու ժամանակահատվածում տարաժամկետ վճարման ենթակա վճարումներից ստացված միջոցները՝ 5,963.31 հազար հայկական դրամ:

8. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե սեփականաշնորհման հաշվին մուտքագրվել է 226,971.16 հազար հայկական դրամ:

9. Համաձայն «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-127-Ն և ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2004 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-126-Ն օրենքների՝ 2024 թվականի ընթացքում մասնավորեցումից ստացված միջոցներից համայնքների բյուջեներ փոխանցվել է 94,717.65 հազար հայկական դրամ:

10. Կառավարության որոշումներով սահմանված կարգով յուրաքանչյուր մասնավորեցվող ընկերության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև Պետական գույքի կառավարման կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակվել է համապատասխան տեղեկատվություն:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ, ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

11. Հաշվետու ժամանակահատվածում ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է Ծրագրում ընդգրկված 1 ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, որի մասին տեղեկությունը ներկայացված է «Պետական գույքի

մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի 1-ին հավելվածում:

12. Մասնավորեցման գործարքների արդյունքում պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարողականը հետևյալն է.

1) պետական գույքի մասնավորեցման պայմանագրերով 2024 թվականի ընթացքում 4 գնորդի կողմից ստանձնած՝ պրոֆիլի պահպանման պարտավորությունները կատարվել են, 1 գնորդի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու հետևանքով գործը գտնվում է դատական գործընթացում և 1 գնորդի կողմից պայմանագրով ստանձնած պրոֆիլի պահպանման պարտավորությունը կատարվել է, իսկ ներդրումային պարտավորությունը չկատարելու հետևանքով հաշվարկվել է տուգանք 30 000 000 հայկական դրամի չափով:

2) մասնավորեցված օբյեկտների գնորդների կողմից հաշվետու ժամանակահատվածում կատարման ենթակա՝ պրոֆիլի պահպանման պարտավորությունների կատարման մասին տեղեկությունները, ըստ առանձին օբյեկտների, ներկայացված են «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի 2-րդ հավելվածում:

13. Հաշվետու ժամանակահատվածում ընկերությունների լուծարման գործընթաց չի իրականացվել:

3. «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

14. Հաշվետու ժամանակահատվածում «փոքր» օբյեկտ չի մասնավորեցվել:

Հավելված 1
«Պետական գույքի մասնավորեցման
2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2024 թվականի տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին»
օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Ընկերության (պետական գույքի) անվանումը (ծածկագիրը՝ ըստ Ծրագրի)	Գտնվելու վայրը	Պետական կառավարման մարմինը	Կառավարության որոշման համարը, ամսաթիվը	Պետական գույքի գնահատված արժեքը (հազար հայկական դրամ)	Վաճառքի գինը (հազար հայկական դրամ)	Ընկերության հաշվեկշռում ամրագրված պարտավորությունները (հազար հայկական դրամ)	Ներդրումային պարտավորությունների և սոցիալական երաշխիքների մասին՝ ըստ մասնավորեցման պայմանագրի	Գնորդը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	«Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ի 100% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (ծածկագիր՝ 90051)	ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 2/3	Պետական գույքի կառավարման կոմիտե	Կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N 1388-Ա որոշում	3,228,782.7 (այդ թվում 0.102737 հա հողատարածքի՝ 191,850.0 հազար հայկական դրամ շուկայական արժեքը)	3,036,932.7 (առանց 0.102737 հա հողատարածքի՝ 191,850.0 հազար հայկական դրամ շուկայական արժեքի)	18,692.8	ընկերությունը պարտավոր է 5 տարվա ընթացքում կատարել 1,200,000.00 հազար հայկական դրամի ներդրումներ՝ 1-ին տարի 10,000.0 հազար հայկական դրամ 2-րդ տարի 180,000.0	«ՆԵՔՍՏ ՋԵՆ ՍՊՈՐՏՍ» ՍՊԸ

						գումարը վճարել 10 տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարի 303,693.27 հազար հայկական դրամ		հազար հայկական դրամ 3-րդ տարի 300,000.0 հազար հայկական դրամ 4-րդ տարի 350,000.0 հազար հայկական դրամ 5-րդ տարի 360,000.0 հազար հայկական դրամ և 25 տարվա ընթացքում պրոֆիլի պահպանման պարտավորություն	

Հավելված 2
«Պետական գույքի մասնավորեցման
2017-2020 թվականների ծրագրի
կատարման 2024 թվականի տարեկան
հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊՐՈՖԻԼԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

h/h	Մասնավորեցված գույքի և գնորդի անվանումը	Նախատեսված պայմանագրային պարտավորությունները	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1.	Հրազդանի կինոցանցի «Հրազդան» կինոթատրոնի գույք Կոտայքի մարզ, ք. Հրազդան, փ. Սպանդարյան Գնորդ՝ Բագրատ Առաքելյան Պայմանագիր՝ 225-Մ 20.01.2005 թ	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	20.01.2024թ.	Պահպանվել է:
2.	Հրազդանի կինոցանցի գույքի կազմից առանձնացված «Բարեկամություն» կինոթատրոնի գույք Գնորդ՝ Արտավազդ Ղազարյան Պայմանագիր՝ 226-Մ 24.01.2005 թ.	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	24.02.2024թ.	Պահպանվել է:
3.	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի բաժնետոմսեր ք.Երևան, Խանջյան 19, Գնորդ՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի աշխատավորական կոլեկտիվին՝ 40%,	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	22.10.2024թ.	Պահպանվել է:

	«Արմենիան Քափըր Փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 30%, «Մաքուր երկաթի գործարան» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 30% : Պայմանագիր՝ 435-ՈՒ 22.10.2002թ.:			
4.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի 90% պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցում Գնորդ՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ Պայմանագիր՝ 880-Ու 10.08.2020թ.	Պահպանել ընկերության գործունեության պրոֆիլը	10.08.2024թ.	Պահպանվել է:
5.	«Նեյտրոն ԳԱՄ» ՓԲԸ Ք.Երևան, Բագրատունյաց 73 և «Բագավան» ՓԲԸ 100% բաժնետոմսեր: Գնորդ՝ ք.Աշտարակ, Բագավան 2: «Մոսթոն Էնջինիրինգ ԼՏԴ» ընկերություն: Օլիաջի առևտրի կենտրոն, Ֆրենսիս Ռեյչլ փողոց 1312 Վիկտորիա, Մահե, Սեյշելյան կղզիներ Տնօրեն Դավիթ Գալստյան Պայմանագիր՝ 865-Ու 12.04.2011թ. ~~<<~~ ~~կ~~Կառավարության 21.06.2007 թվականի թիվ 714-Ն որոշում:	Կատարել 3,4 մլդ հայկական դրամի չափով ներդրում : Ապահովել 180 նոր աշխատատեղ՝ ամսական միջին աշխատավարձը դարձնելով 80 000 ~~<<~~ հայկական դրամ: Պահպանել Ընկերության գործունեության պրոֆիլը:	14.10.2024թ.	Դատական գործընթացում է:
6.	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Կատարել 150 000 000 ~~<<~~ հայկական դրամի	30.12.2024թ.	Հաշվարկվել է տուգանք 30 000 000 հայկական դրամ, պահպանվել է

	Գնորդներ՝ Վիոլետա Սարգսյան, Աննա Գյոզալյան Պայմանագիր՝ 11.04.2023թ. 01-Մ	ներդրում, պրոֆիլի պահպանում		ընկերության գործունեության պրոֆիլը

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1063-28.04.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԻԾ) ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	***Կառավարություն***	2-րդ հավելված 5-րդ կետ	Առաջարկվում է «ՀՀ կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	***Կառավարություն***	**2-րդ հավելվածի 5-րդ և 6-րդ կետեր**	Նախագծի 2-րդ հավելվածի 5-րդ եւ 6-րդ կետերում կիրառված «դրամ» եւ «ՀՀ դրամ» բառերն՝ համապատասխան հոլովաձեւերով, առաջարկվել է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փոխարինել «հայկական դրամ» բառերով՝ համապատասխան հոլովաձեւերով՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հասկացությունը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից:		